ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք. ՀՀ.
Արարատի մարզ, գ. Դեղձուտ, Չարենցի 21, Հեռ. (0235)61906, (094)839565 , dexcuthamaynq@mail.ru

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԻՆ

N 81
*24 դեկտեմբեր 2015թ.*

Ներկայացվում են Դեղձուտ համայնքի ավագանու 17.12.2015թվականի թիվ 12 նիստի թիվ 25-Ն; 26-Ն; 27-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Յուրիկ Մուրադյան

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Կ. Գիշյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 25-Ն

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջներով ավագանին

որոշում է`

Դեղձուտ համայնքի վարչական տարածքում 2016թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.
1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/
շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.
Հիմնական օբեկների համար`
ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում`այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար -10000 դրամ
բ/ սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`
բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -20000 դրամ
բբ/ 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 40000 դրամ
բգ/ 1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -50000 դրամ
բդ/ 3001 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -100000 դրամ
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`
գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկների համար -3000 դրամ
դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -5000 դրամ
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքերի /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված`շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`
ա/չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում`ստորգետնյա/ հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն -3000դրամ
բ/բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման

աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույների /այդ թվում `ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սոյնհոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով. գ/նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտայի չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սոյն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվաի 1-ին կետով սահմանված նորմերը: 3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 4000դրամ :

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է`

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում`յուրաքանչյուր եռամսյակի համար` -5 000դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` -5000դրամ

5. Համայնքի տարածքում`

ա/բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվումէ յուրաքանչյուր օրվա 1քմ-ի համար -10 դրամ

բ/հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում -150000դրամ

գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է -30000դրամ.

գա/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է` -

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - -1000դրամ

-ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում` 500դրամ

6. Համայնքի տարածքում` առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է`

ա/ առևտրի օբյեկտների համար - 25 000դրամ
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար -50000 դրամ
գ/ բաղնիքների /սաունաների/ համար -200000 դրամ
դ/ խաղատների կազմակերպման համար -500000 դրամ
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար -250000 դրամ
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար -100000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է`

ա/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող

արտաքին գովազդի համար`                                                                                      -1000դրամ.
բ/ թունդ ալկոհոլային /ապիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500դրամ.
գ/ այլ արտաքին գովազդի համար` 500դրամ.
դ/ դատարկ գովազդային վահանակների համար` 700դրամ:
8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ: Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000դրամ:
9/Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 4000դրամ:
10/Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարի դրույքաչափերի սահմանումը

11/Համայնքի տարածքում շինարարություն կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման վճար գանձվում է ` 1000 դրամ: -
12.Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու ,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման վճար գանձվում է ` 1000 դրամ:
13.Գյուղապետարանի կողմից մրցույթներ, աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվում է որպես փոխհատուցման վճար - 1000 դրամ:

Կողմ -6                                        Դեմ -0          Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԻՐՈՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                    ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 26-Ն

### ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Դեղձուտ համայնքի գույքագրման հանձնաժողովի 10.12.2015թվականի ակտը ավագանին

որոշում է՝

հաստատել Դեղձուտ համայնքի 2015թվականի գույքագրման ակտը ներքոհիշյալ տեսքով, որ 2015թվականի հիմնական միջոցների գույքագրման ժամանակ պարզվեց հետևյալ գույքի առկայությունը.

1.հիմնական միջոցներ

| N | անվանումը | հատ | գումար |
|---|---|---|---|
| 1 | մեծ կշեռք | 1 | 48478 |
| 2 | ակումբի շենք | | 9191316 |
| 3 | գազատար | | 696400 |
| 4 | դպրոցի հին շենք | | 812045 |
| 5 | գրասեղան | 4 | 320000 |
| 6 | գրապահարան | 3 | 210000 |
| 7 | բազկաթոռ | 1 | 70000 |
| 8 | գազատար | | 300000 |
| 9 | բուժկետ | | 1401100 |

| | | |
|---|---|---|
| 10 ցանկապատ | | 242461 |
| 11 համակարգիչ | 1 | 395000 |
| 12 հեռուստացույց | 1 | 100000 |
| 13 պատճենահանման սարք | 1 | 115000 |
| 14 գրասենյակային կոմպլեկտ | 1 | 150000 |
| 15 գրասենյակային աթոռ | 5 | 100000 |
| 16 աթոռ | 10 | 150000 |
| 17 հեռուստացույցի տակդիր | 1 | 50000 |
| 18 համակարգիչ | 1 | 170000 |
| 19 մոնիտոր | 1 | 90000 |
| 20 UPGHEN | 1 | 10000 |
| 21 համակարգչի սեղան | 1 | 6500 |
| 22 համակարգչի աթոռ | 1 | 28600 |
| 23 մշակույթի տան քարե ցանկապատ | | 3699100 |
| 24 գազատար | | 599400 |
| 25 գազատար | | 300000 |
| 26 հեռուստացույց TOSIBA | 1 | 110000 |
| 27 սառնարան TOSIBA | 1 | 115000 |
| 28 լուսատու մեծ լամպով | 18 | 330000 |
| 29 ծառայողական ավտոմեքենաKIA CERATO | 1 | 6100000 |
| 30 համակարգիչL420 | 1 | 342000 |
| 31 նոթբուք TOSIBA C50-01 | 1 | 290000 |

Շրջանառու միջոցներ

| N | անվանումը | հատ | գումար |
|---|---|---|---|
| 1 | մետաղյա գրապահարան | 3 | 924,0 |
| 2 | գրասեղան | 3 | 1167 |
| 3 | պատի հայելի | 2 | 578 |
| 4 | բազկաթոռ | 1 | 193 |
| 5 | պահարան | 2 | 578 |
| 6 | սեղան | 10 | 215000 |
| 7 | աթոռ | 20 | 160000 |

գրադարան

| N | անվանումը | հատ | գումար |
|---|---|---|---|
| 1 | գրասեղան | 1 | 134 |
| 2 | փոքր սեղան | 1 | 20 |
| 3 | կատալոկի սեղան | 2 | 477 |
| 4 | գրասեղան | 1 | 173 |
| 5 | երկաթյա պահարան | 4 | 785 |

Հանւագիտարան ՀՍՀ Մանկական հանրագիտարան

| N | անվանումը/հատոր/ | հատ | գումար |
|---|---|---|---|
| 1 | առաջին | 1 | |
| 2 | երկրորդ | 1 | |
| 3 | երրորդ | 1 | |
| 4 | չորրորդ | 1 | |
| 5 | հինգերորդ | 1 | |
| 6 | վեցերորդ | 1 | |

| N | անվանումը/հատոր/ | հատ | գումար |
|---|---|---|---|
| 1 | առաջին | 3 | |
| 2 | երկրորդ | 3 | |
| 3 | երրորդ | 3 | |
| 4 | չորրորդ | 3 | |

| | | |
|---|---|---|
| 7 | յոթերորդ | 1 |
| 8 | ութերորդ | 1 |
| 9 | իններորդ | 1 |
| 10 | տասերորդ | 1 |
| 11 | տասնմեկերորդ | 1 |
| 12 | տասներկուերորդ | 1 |
| 13 | տասերեքերորդ | 1 |

Գեղարվեստական գրականություն

| N | անվանումը | հատ | գումար/դրամ/ | N | անվանումը | հատ | գումար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շուշի | 1 | 3500 | 26 | Ես ՀՀ-ի քաղաքացի եմ | 1 | 800 |
| 2 | Ангел хранитель дома | 1 | 500 | 27 | Կավե սալիկներից մինչ թողք. | 1 | 600 |
| 3 | Հեռավոր զանգերի կանչը | 1 | 800 | 28 | Պատմվածքներ | 1 | 200 |
| 4 | Դուք գնացեք ես մնում եմ | 1 | 500 | 29 | Գրաբարի քերականություն | 1 | 2000 |
| 5 | Թատրոն | 1 | 800 | 30 | Սիրո համազարկ | 1 | 500 |
| 6 | Զագրոսի լույսերը | 1 | 500 | 31 | Մասրածաղկի բույրը | 1 | 500 |
| 7 | Արևոտ ձյուներ | 1 | 800 | 32 | Հյուր եղիր ինձ Տեր | 1 | 500 |
| 8 | Երազների մեկնություն | 1 | 700 | 33 | Երկխոսություն երրորդի | 1 | 2000 |
| 9 | Ակնաղբյուր | 1 | 500 | 34 | Շեքսպիրյան հրավառություն | 2 | 1200 |
| 10 | Հայաստանը պետական գաղտնի փ. | 1 | 1000 | 35 | Mercenaries, extremists ard | 1 | 500 |
| 11 | բանաստեղծություններ/Վ.Փել. | 1 | 500 | 36 | E. Serdar Histreta Emir | 1 | 1500 |
| 12 | Դառնանուշ կյանք | 1 | 500 | 37 | Ավետիսյանց երկիր | 1 | 300 |

| | | |
|---|---|---|
| 13 Հայ տպագրության տարեգիր | 2 | 600 |
| 14 Անտեսանելի շղթա | 1 | 700 |
| 15 Ճարտարապետ | 1 | 2000 |
| 16 Հռոմ | 1 | 800 |
| 17 Երաժշտական գրականություն | 1 | 1500 |
| 18 Բարի գիշեր հեքիաթներ | 1 | 400 |
| 19 Երաժշտության աշխարհում բալետ | 1 | 1000 |
| 20 Մեր կյանքի ժամանակը | 1 | 600 |
| 21 Միսաք թռռլաք. դատ | 1 | 1500 |
| 22 Առանց թիթեռ ինչ ծաղիկ | 1 | 300 |
| 23 Դավաճանություն | 1 | 700 |
| 24 Օրը արևածաղկի մշուշում | 1 | 200 |
| 25 Հազարադուռ աշխարհ | 1 | 400 |
| 38 Տիգրան Մեծ | 1 | 1000 |
| 39 Հայ տպագրության տարեգիրք | 1 | 300 |
| 40 Սրտի մտոք և հարգանք | 1 | 1000 |
| 41 Համաշխարհային պոեզիա | 1 | 300 |
| 42 Հեքիաթե պարան | 1 | 300 |
| 43 Ջրերի ցնծության ժամ | 1 | 400 |
| 44 Արդի գրականություն | 1 | 1000 |
| 45 Երկուսը դժոխքում | 1 | 1200 |
| 46 Մոսկվա և Պետերբուրգ | 1 | 800 |
| 47 Դու անկործանք վանք | 1 | 1000 |
| 48 Արևն այստեղ է | 1 | 800 |
| 49 Սոնան և Արևը | 1 | 400 |

Գրքերի ընդհանուր քանակը 5451 հատ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԻՐՈՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565,
dexcuthamaynq@mail.ru

### Ո Ր Ո Շ Ու Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 27-Ն

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդածի 3-րդ կետի պահաջներով ավագանին

որոշում է՝

Ելնելով անհրաժեշտությունից Վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝ ներքոհիշյալ հոդվածնեից հանել 1565.0 հազար դրամ գումար

| | | |
|---|---|---|
| 11.01.02.51 | 4891 | - 1070.0 հազ.դրամ |
| 10.07.01.55 | 4819 | -170.0 հազ. դրամ |
| 09.05.01.51 | 4637 | -50.0 հազ. դրամ |
| 09.01.02.51 | 4637 | -100.0հազ.դրամ |
| 01.01.01.51 | 4212 | -50.0 հազ.դրամ |
| | 4261 | -50.0հազ.դրամ |
| | 4234 | -30.0հազ.դրամ |
| | 4213 | -45.0հազ.դրամ |

և ավելացնել համապատասխան հոդվածներին՝

| | | |
|---|---|---|
| 10.07.01.54 | 4729 | +1465.0 հազ դրամ |

01.01.01.51 4264 +100.0 հազ դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԻՐՈՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ